ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
✆ 0256-2-14-75
էլ.փոստ: loriberd.lori@mta.gov.am

թիվ 526
« 20 » սեպտեմբերի 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

պարոն Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան.

Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 2018թ. սեպտեմբերի 18-ի թիվ 78-Ա որոշումը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2018թ. № 78-Ա

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0041-0012 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ագարակ գյուղի բնակիչ Սերժիկ Սերյոժայի Սաքանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 08.05.1991թ. թիվ 10 որոշումից քաղվածքը, «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագիծը, ղեկավարելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ 510-Ն օրենքով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0041-0012 ծածկագրի տակ գտնվող 1199.8 քմ բնակելի կառուցապատման հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը՝

ա) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0041-0012 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի մակերեսը՝ 1199.8 քմ.

բ) հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ն կետում նշված 1199.8 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Սերժիկ Սերյոժայի Սաքանյանին, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տների և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուշով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի , Ագարակ գյուղի 06-009-0041-0012 ծածկագրի տակ գտնվող 1199.8 քմ. մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 76.02 քմ. մակերեսով թիվ 1 բնակելի տան և 11.50քմ բաց պատշգամբի, 40.41 քմ. մակերեսով թիվ 2 բնակելի տան և 32.40 քմ բաց պատշգամբի, 3.83 քմ. մակերեսով պարիսպի, 1.57 քմ. մակերեսով պարիսպի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել Սերժիկ Սերյոժայի Սաքանյանի սեփականության իրավունքը:

4. Հաստատել 06-009-0041-0012 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ագարակ, 9 փողոց, թիվ 1 բնակելի տուն:

5. Անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի կողմից 12.11.2001թ. տրված քաղվածքը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2018թ. սեպտեմբերի 18
գ. Լոռի Բերդ